ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՆԻՍՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող., թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mla.gov.am

N 27
21.01.2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս/թ հունվարի 21-ին ժամը 15:00-ին տեղի ունեցավ Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2018թ. 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների մասին հանրային լսումներ, որին ներկա էին գյուղապետարանի աշխատակիցները, համայնքի ավագանու անդամները և համայնքի բնակիչները:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց կատարած աշխատանքները.
1.Հայանիստ համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի հաշվին 2018 թվականի 2-րդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները՝
1)Գետաշեն թաղամասի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում-10.500.000 դրամ, որից՝
.համայնքի բյուջեից-1.500.000 դրամ,
.սուբվենցիա-9.000.000 դրամ:
2) 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 23-րդ և Ա. Խաչատրյան փողոցների գազաֆիկացում- 6.472.000 դրամ:
2.Հայանիստ համայնքի բնակիչներին 2-րդ կիսամյակում տրվել է 2.559.740 դրամ դրամական օգնություն, ընդ որում՝
1) սոցիալական խնդիրները լուծելու նպատակով – 1.490.000 դրամ:
2) հուղարկավորության ծախսեր.- 520.000 դրամ:
3)ուսման վարձ- 150.000 դրամ:
4)անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճար- 219.740 դրամ:
5)Ամանորի կապակցությամբ տրվել է դրամական օգնություն՝ Հայրենական պատերազմի մասնակիցներին, Արցախյան հերոսամարտի և Աֆղանստանի պատերազմի մասնակիցներին, զոհված ազատամարտիկների և զոհված զինծառայողների ընտանիքներին և ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձանց- 180.000 դրամ:
3.Հայանիստ համայնքի բյուջեի՝ 2018 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականը՝

1) հողի հարկ՝ 106.0 %,
2) գույքահարկ՝ 98.0 %,
3) հողի վարձակալ.՝ 95.0 %,
4) տեղական տուրքեր՝ 90.0 %:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ